

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարության եզրակացությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Գալուստ Սահակյանի, Ռաֆիկ Պետրոսյանի, Արամ Սաֆարյանի, Վարդան Բոստանջյանի, Արտակ Դավթյանի և Արտակ Զաքարյանի` օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ:

Ըստ ներկայացված նախագծերով առաջարկվող «ձեռնարկատիրական գործունեություն և «անհատ ձեռնարկատերի հասկացությունների սահմանման` ձեռնարկատիրական է դիտվում ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից պետական հաշվառմամբ կամ պետական գրանցմամբ իրականացվող գործունեությունը: Այսինքն, ներկայացված տարբերակով որպես ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից իրականացվող գործունեության ձեռնարկատիրական համարվելու չափանիշ, դիտվում է պետական գրանցման կամ հաշվառման պահանջը, ինչն ընդունելի չէ:

Բացի դրանից` «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսված դրույթներով «ձեռնարկատիրական գործունեության և հասկացության սահմանումը կապվում է անհատ ձեռնարկատիրոջ կամ իրավաբանական անձի կողմից ինչպես ինքնուրույն, այնպես էլ իր կողմից ստեղծված տնտեսական ընկերակցության կամ ընկերության մասնակցության միջոցով ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա այլ անձանց անունից իրականացվող գործունեության հետ, ինչը չպետք է դիտվի որպես ձեռնարկատիրական գործունեություն:

Հարկ ենք համարում նշել, որ «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածով նախատեսվող օրենսգրքի 2-րդ հոդվածի նոր խմբագրությունը հակասում է նույն օրենսգրքի 26-րդ հոդվածով սահմանված դրույթներին, քանի որ նշված հոդվածը թույլատրում է քաղաքացիներին առանց պետական գրանցման (առանց իրավաբանական անձ կազմավորելու կամ անհատ ձեռնարկատեր գրանցվելու) զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ, եթե նրանք հանդիսանում են արտոնագրային վճար վճարողներ կամ գյուղատնտեսական արտադրանք արտադրելու նպատակով կնքել են համատեղ գործունեության պայմանագիր:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը գտնում է, որ ձեռնարկատիրական գործունեության և անհատ ձեռնարկատիրոջ հասկացությունները պետք է ներառեն երեք կարևոր բաղադրիչներ՝ ինքնուրույնությունը, իր ռիսկով գործունեություն իրականացնելը և շահույթ ստանալը, ինչը լիարժեք ձևով սահմանված է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 2-րդ և «Անհատ ձեռնարկատիրոջ մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածներով:

Ելնելով շարադրվածից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը դեմ է ներկայացված օրենքների նախագծերի փաթեթի ընդունմանը:

Միաժամանակ հայտնում ենք, որ, ներկայացված օրենքների նախագծերի փաթեթը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մալխասյանը:

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ  
Պ-1038-26.11.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին

*Հոդված 1.* Հայաստանի Հանրապետության 1998 թվականի մայիսի 5-ի քաղաքացիական օրենսգրքի 2-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

*«Հոդված 2. Ձեռնարկատիրական գործունեություն*

Ձեռնարկատիրական է համարվում ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից պետական հաշվառմամբ կամ իրավաբանական անձի կողմից պետական գրանցմամբ, ինքնուրույն կամ իր կողմից ստեղծված տնտեսական ընկերակցության կամ ընկերության կամ նման ընկերությանը մասնակցելու միջոցով, ինչպես նաև առևտրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, իր կամ օրենքով սահմանված դեպքերում՝ այլ անձանց անունից եւ (կամ) իր ռիսկով (պատասխանատվությամբ) իրականացվող գործունեությունը, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց եկամուտ (շահույթ) ստանալն է:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Նախագիծ  
Պ-1038՝-26.11.2010-ՊԻ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՔԸ

«Անհատ ձեռնարկատիրոջ մասին Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

*Հոդված 1.* Անհատ ձեռնարկատիրոջ մասին (3 ապրիլի 2001թ. ՀՕ-167) Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի առաջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Անհատ ձեռնարկատերն այն ֆիզիկական անձն է, որն իրավունք ունի, առանց իրավաբանական անձ կազմավորելու, պետական հաշվառմամբ, ինքնուրույն, իր անունից եւ իր ռիսկով (պատասխանատվությամբ) իրականացնել գործունեություն, որի հիմնական նպատակը գույք օգտագործելուց, ապրանքներ վաճառելուց, աշխատանքներ կատարելուց կամ ծառայություններ մատուցելուց եկամուտ ստանալն է:

*Հոդված 2.* Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ձեռնարկատիրական գործունեությունը (գործարարությունը) տնտեսական գործունեության տարատեսակ է, որն իր մեջ ներառում է փոխկապակցված եւ հաջորդաբար կատարվող գործողություններ, որոնք ուղղված են որոշակի նպատակի հասնելուն՝ եկամուտ (իրավաբանական անձի կողմից՝ շահույթ) ստանալուն: Այդ գործունեությունն իրականացվում է ինքնուրույն, որը ենթադրում է գործունեության ոլորտն ընտրելիս ձեռնարկատիրոջ անկախությունը պետական մարմիններից, հիմնարկներից եւ մասնավոր անձանցից: Ձեռնարկատիրական գործունեությունը նաեւ ռիսկային է, որովհետեւ դրա հետեւանքով վնասներ կրելու կամ օգուտներ ստանալու հավանականությունն անորոշ է:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ձեռնարկատիրական գործունեությունը բնորոշում է վերը նշված երեք հատկանիշներով (հոդվ. 2), սահմանելով, որ դա ինքնուրույն, իր ռիսկով գործունեություն է, որի հիմնական նպատակը շահույթ ստանալն է: Մինչդեռ նախ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվող ֆիզիկական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը ստանում են ոչ թե շահույթ, այլ եկամուտ: Երկրորդ՝ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար պարտադիր նախապայման է նաեւ այն, որ ձեռնարկատիրոջ կարգավիճակ ֆիզիկական անձինք եւ անհատ ձեռնարկատերերը կարող են ձեռք բերել միայն պետական հաշվառման, իսկ իրավաբանական անձինք՝ միայն պետական գրանցման պահից: Եթե ձեռնարկատերն իր գործունեության պետական հաշվառում կամ գրանցում չի իրականացնում, եւ այդ գործունեությունից եկամուտ կամ շահույթ է ստանում, ապա իրավախախտը ենթարկվում է քաղաքացիաիրավական (Քաղ. օր. 26-րդ հոդվ.), վարչաիրավական (ՎԻՎՕ-ի 169-րդ հոդվ.) կամ քրեաիրավական (Քր. օր. 188-րդ հոդվ.) պատասխանատվության:

Բացի այդ, ըստ Քաղ. օր. «Հիմնական դրույթներ իրավաբանական անձանց միությունների մասին» վերառությամբ 125-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ պարբերության «Եթե մասնակիցների որոշմամբ միությանն իրավունք է վերապահվել իրականացնելու ձեռնարկատիրական գործունեություն, ապա այդպիսի միությունը... կարող է ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար ստեղծել տնտեսական ընկերություն, կամ լինել նման ընկերության մասնակից: Եւ Եւրոպական օրենսգրքի 50-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն իրավաբանական անձանց միությունը կարող է ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվել ոչ միայն ինքնուրույն ձևով, այլեւ այդ նպատակով առետրային կազմակերպություն (տնտեսական ընկերություն) ստեղծելու կամ նման կազմակերպությանը մասնակից դառնալու միջոցով, կամ էլ առետրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա (տե՛ս Քաղ. օր. 1026 եւ 1038.1-րդ հոդվածները): Հետեւաբար «ինքնուրույնե բառն իր մեջ պետք է պարունակի նաեւ Քաղ. օր. 50, 125, 1026 եւ 1038.1-րդ հոդվածների նշված բովանդակությունը: Մյուս կողմից, ըստ ԱԺ-ում կառավարության կողմից շրջանառության մեջ դրված օրենսդրական փաթեթի՝ անհատ ձեռնարկատերերի պետական գրանցումը փոխարինվել է նրանց «պետական հաշվառմամբ արտահայտությամբ:

Այսպիսով, ձեռնարկատիրական գործունեությունն իրականացվում է ոչ միայն պետական գրանցմամբ, այլ նաեւ պետական հաշվառմամբ, ոչ միայն տնտեսական գործունեության սուբյեկտի կողմից ինքնուրույն, այլ նաեւ տնտեսական ընկերակցությանը կամ տնտեսական ընկերությանը մասնակցելու միջոցով, կամ էլ առետրային կազմակերպությունների ձեռնարկատիրական գործունեության համար կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, ոչ միայն սեփական ռիսկով, այլ նաեւ ուրիշների պատասխանատվությամբ, որպիսի հանգամանքները նույնպես արտացոլվել են Քաղ. օր. 2-րդ եւ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» օրենքի 1-ին հոդվածներում:

Մույն օրինագիծը կոչված է վերացնելու Քաղ. օր. 2-րդ եւ «Անհատ ձեռնարկատիրոջ մասին» օրենքի 1-ին հոդվածի հիշյալ բացթողումները: